

ՆՐԵՄԻԱ ՄԱՐԳԱՐԷ:

Մարգարէների մէջ ամենից մեծը Համարուում է: և իրաւամբ, Եսային, որի հուժեկու ձայնը մինչև այսօր էլ թնդացնում է նորա մարգարէութիւնները կարգացողի սիրտը: բայց իբրև Աստուծոյ մարգ, իբրև պատմական գործիչ, իբրև խօսող և գրող մարգարէ, Երեմիան ոչ մի բանով նորանից յետ չէ մնում: Եսային աւելի հրապարակի մարգ է, մի տեսակ իշխանական գիրք ունի, ազդեցութիւն է գործում թագաւորների և իշխանների վերայ, ընթացք է տալիս նոցա քաղաքականութեան, ամբողջ տարիներ ինքն է կառավարում գրեթէ Յուդայի երկիրը: Երեմիան ամենից նախատուած ու հալածուած մի անկիւն է քաշուում խօսում է սրտի խորքից, խօսում է իւր Աստուծոյ հետ, սղբում արձագանգ է տալիս այն խոր վշտին, որով լեցնում էին նորա սիրտը իւր ժողովուրդի մեղքերն ու ցաւերը: այս պատճառով նորա ներքին հոգեկան կեանքը մեզ աւելի մօտիկ ծանօթ է, մենք միջոց ունինք կարգալու մարտի, վստմ և աստուածաշունչ խորհուրդներով լի մի սիրտ, որ զգացել և տանջուել է այնպէս ինչպէս շատ քչերինը մարգկային սերունդից: մեզ ներկայանում է այստեղ մի մեծ, խորհրդաւոր անձնասրութիւն, որ կարծես արդէն մի սուրը ներս է գրել Նոր Ախտի սահմաններում: ուստի և առանձնապէս ընտանի է մի քրիստոնէի ըմբռնման և զգացումներին:

Երեմիան ապրում էր ամենագոյն ժամանակի և պայմանների մէջ: Նա մարգարէական կոչումն ընդունեց Յովսիա թագաւորի իշխանութեան 13րդ, այն է Քրիստոսից առաջ 626 թուականին, դեռ երիտասարդ հասակում (գլ. Ա. 2 և 62.): երբ Ալիւթացի ցեղերը հիւսիսից արշաւել, ամբողջ արևելքը ողողել և մինչև Պաղեստին էին հասել: Գոյժերով բաց արաւ նա իւր բերանը, ահեղ դատաստան պատիժ և կործանումն գուշակեց ժողովրդին իւր բազմութիւ յանցանքների համար: սակայն առ ժամանակ այդ գուշակութիւնը մնաց անհետեւ: Երուսաղէմում իշխում էր բարեպաշտ Յովսիա թագաւորը, որ ամեն տեսակ կապաշտական սովորութիւններ իւր երկրից հանել տուաւ և բոլոր պաշտամունքը Երուսաղէմի տաճարում կեդրոնացրեց, որպէս զի այդ արտաքին միութեան մէջ արտայայտուէր մի ճշմարիտ Աստուծոյ գաղա-

փարք*, ժողովուրդը զզման նշաններ ցոյց տուաւ: օրինաց որոշումներին հետևել, իւր կրօնական կեանքը նոցա համաձայնեցնել ըսկրեսց, բայց մարգարէն չհարուեցաւ այդ առերևոյթ, ժամանակաւոր յաջողութեամբ: Նա տեսնում էր, որ արտաքին օրինապահութեան ներքոյ շարունակում էին նոյն անիրաւութիւնները տեղի ունենայ, որ Երուսաղէմի բնակիչները տաճարի սրբութեան վերայ վատահացած և համոզուած, որ Աստուած թող չի տայ նորան օտարի ձեռքն ընկնել՝ աւելի անբարոյական և զեղխ կեանք էին վարում: և նա շարունակում էր սպասնալիքներ կարգալ, աւելի և աւելի խիստ լեզուով իւր յոնգիմանութիւններն անել, աւելի բարձր ձայնով կրկնել իւր գուշակութիւնը Երուսաղէմի կործանման մասին: Այսպիսով նա թշնամացրեց իրեն ի հարկէ ամբողջ ժողովրդին, նորան հալածում են ամեն տեղ, հայհոյիչ Աստուծոյ և ամբարիշտ են համարում: ծագում են, որովհետև նորա գուշակութիւնների կատարումն ուշանում է, բանան են նատեցնում: բայց նա մնում է ամբողջ քառասուն տարի, իբրև զքաղաք ամուր և իբրև զսին կրկնել հաստատուն իւր կոչման մէջ, ուրախ օր չէ տեսնում՝ մինչև որ կատարուում է արգարե իւր գուշակութիւնը, առանց միթիթարութիւն բերելու նորա վշտալիք սրտի համար:

Այդ միջոցում շատ նշանաւոր քաղաքական գեւաբեր էին տեղի ունեցել: Ասորեստանի ահագին պետութիւնը կարճ միջոցում ոչնչացել էր և Յուդայի երկիրը, առժամանակ Եգիպտոսացոց հպատակ լինելուց յետոյ, բաբելոնացիների իշխանութեան ներքոյ էր ընկել, որոնք մի մեծ ճակատամարտում յաղթելով նոցա (604 թուին), տէր էին դարձել Ասորեստանի նախկին բոլոր երկրներին: Յուդայի թագաւորները, օգտուելով այս փոփոխութիւններից, փորձեցին մի քանի անգամ հակառակ մարգարէի ազդարարութիւններին**, թօթափել բռնաւորների լուծը, բայց պարտութիւն կրեցին ամեն անգամ և աւելի ծանր հարկատուութեան ենթարկուեցան: Արդէն 597 թուին գերի էր տարուել Յիւզնիան Երուսաղէմի բնակիչների մի մասի հետ, որի մէջ էր նաև Եղեկիէլ մարգարէն: 586 թուին ընկաւ Երուսաղէմը վերջնականապէս և Երեմիան ուրիշ փախրտականների հետ Եգիպտոսում ապաստան գտաւ:

* Տես. Դ. Թագ. գլ. 22 և 23:
 ** Համ. Երեմ. 18:

Այս բոլոր արկածների մէջ անտարբեր
 Հանգիստատես չէր նա ի հարկէ. թէ ինչպէս
 խոր կերպով խոցուում էր նորա սիրտը իւր
 ժողովրդի աղէտները տեսնելիս՝ գորան
 վկայ են իւր գրուածքի ամենագեղեցիկ կր-
 տորները*։ Նա շատ անգամ աշխատում էր
 բարեխօսել Տիրոջ առաջ, որ ներէ ժողո-
 վրդի յանցանքները յետ առնէ իւր ըս-
 պառնալիքները, բայց իրականութիւնը դի-
 տելով ստիպուած էր միշտ խոստովանել, որ
 դատաստանը անխուսափելի է, միայն խիստ
 պատիժը, գերութիւնը կարող էր իւր ազ-
 գին ուշքի բերել, դէպի ապաշխարութիւն,
 դէպի մի նոր կեանք ուղղել**։ Երբեմն կա-
 մենում է նա խոյս տալ փախչել, ճշմար-
 տութիւնը հրապարակ չհանել, բայց Աստու-
 ծոյ խօսքը կրակ է դառնում այրում է նո-
 րա ներքը՝ լսել նա չէ կարող։ Առանց խո-
 րապէս զգածուելու չի կարելի կարգալ օր.
 ԺԷ. 10—21, Ի. 7—18 համարները, ուր
 ներկայանում է մեզ նորա հոգւոյ մէջ այս-
 պիսի բողոքներում տեղի ունեցող բուռն
 կռիւր, լինում են ժամեր, երբ նա պատրաստ
 է մինչև իսկ իւր ծնունդը, իւր կեանքն ա-
 նիծելու (ԺԵ. 10 շ.)։ Բայց այդ նորան եր-
 բէք դէպի յուսահատութիւն, դէպի թերա-
 հաւատութիւն չէ մղում։ ամենածանր հան-
 գամանքների մէջ էլ անդրդուելի է մնում
 նորա այն համոզումը, թէ Տէրը միշտ նորա
 հետ է, կրկիէ ու կեանք կտայ նորան (ԺԵ.
 20)։ Երեմիայի համար այնքան որոշ է ճշ-
 մարտութիւնը, այնպէս ակնեբև Աստուծոյ
 խօսքի զօրութիւնը, որ նա նոյնքան անհե-
 թեթ է համարում ճշմարիտ մարգարէի ա-
 սածը ստի՝ որքան ցորենը յարդի հետ շփո-
 թել. «Ոչ ապաքէն բանք իմ իբրև զՏէր
 են, ասէ Տէր, և իբրև զմարծ, որ հատա-
 նէ զվէմս. (ԻԳ. 24—25)։ Աստի և իւր
 կեանքին վտանգ սպառնացող դէպքերում
 անգամ (ԻԱ. 8 շ.) նա աներկիւղ ստպարէզ
 է ելնում Տիրոջ խօսքը յայտնելու. Աստու-
 ծոյ պաշտօնի մէջ լինելը միևնոյն ժամանակ
 երանութիւն է նորա համար։ Նա համոզ-
 ւած է, որ ճշմարտութիւնը ընկնել չէ կա-
 րող և ուրեմն ինքն էլ, իբրև միակ ներ-
 կայացուցիչը Աստուծոյ ճշմարիտ խօսքի՝ ոչ
 ոքից երկիւղ կրելու պատճառ չունի։ Բայց
 միևնոյն ժամանակ նա իւր ժողովրդի հա-
 մար էլ համոզուած է, որ ընդ միշտ մեղքի
 և նեղութեան մէջ պէտք է չլինի, որ ինչ-

քան խիստ լինի դատաստանը, այնքան էլ
 մեծ պէտք է լինի Աստուծոյ ողորմութիւնը
 և պէտք է տարածուի բոլորի վերայ, երբ
 դառնան մի օր, ապաշխարեն և բոլորովին
 նոր կեանք սկսեն, Աստուծոյ հաւատարիմ
 Աստուծոյ սեփական ժողովուրդ լինին (ԻԱ.
 27—40)։ Հեռու ապագայի մասին ունեցած
 այս ակնկալութիւնն էլ պահում և ոյժ է
 տալիս նորան նեղութեան մէջ։ Եւ այնքան
 վստահ է նա, թէ այս ակնկալութիւնը
 պէտք է կատարուի, որ Երուսաղէմի պա-
 շարման վերջին օրերում մի ագարակ է գր-
 նել տալիս, մուրհակը բոլորի աչքի առաջ
 խեցեղէն ամանի մէջ դնում, գետնի տակ
 թաղում, որպէս զի ամենքը համոզուին, թէ
 կը գայ օր՝ «գարձեալ ստացին տունս և
 ագարակս և այգիս յերկրիդ այգմիկ» (ԻԲ.
 15)։

Այսպէս ապրեց ահա այն մարդը, որ
 մինչև այսօր էլ ողբացողի տիպար է համար-
 ուում։ Մենակ է ապրել նա, իւր ողջ կեան-
 քը, իբրև ճշմարտութեան վկայ, միայն սա-
 կաւաթիւ բարեկամներից յարգուած. նա
 պատուէր էր առել մինչև իսկ չամուսնանալ,
 մարդոց սուգին և սերախութեան չմասնակ-
 ցել, որպէս զի իւր անձով կենդանի օրինակ
 լինի գալիք աղէտների (ԳԼ. ԺԶ)։ Ապերախտ
 ժողովուրդը ամբողջ կեանքում նորան հա-
 լածելուց յետոյ, ըստ աւանդութեան, քար-
 կածեց նորան օտարութեան մէջ, զառամեալ
 հասակում, բայց իբրև մարգարէ՝ կենդանի
 մնաց նա գալիք սերունդների համար և
 շարունակեց ամենամեծ ազդեցութիւնը գոր-
 ծել նախ Հին Աւստի, ապա նաև Նոր Աւս-
 տի ժողովրդեան վերայ։ Եթէ առանց նորա
 գուշակութիւնների, Երուսաղէմի կործանու-
 մը տեսնելով՝ բնակիչները պէտք է յուսա-
 հատէին, կասկածէին Խորայէլի Աստուծոյ
 զօրութեան վերայ, որ նոցա այսպէս օտարի
 ձեռքն էր մատնում՝ մարգարէի շնորհիւ նորա
 բոլոր պատահածների մէջ իրենց մեղքերի
 պատիժը տեսն և հաւատալով, որ ինչպէս
 նորա գուշակած բոլոր չարիքը տեղի են ու-
 նեցել, այնպէս էլ բարիքը տեղի պիտի ունե-
 նային՝ ժողովուրդեացան, մի համայնք կազմե-
 ցին սկսան իրանց կեանքը Աստուծոյ տը-
 ուած օրէնքներին համակերպել, մինչև որ
 մարգարէի նշանակած եօթանասուն տարին
 անցաւ, Խորայէլի Աստուածը զարմանալի
 կերպով նոցա կրկին հայրենիք վերադարձ-
 րեց. եկան վերականգնեցին կրկին Երուսա-
 ղէմն ու տաճարը, Եկաւ վերջապէս նաև
 այն ժամանակը, երբ Աստուծոյ օրէնքը ոչ

* Տես. ԳԼ. Ը. 20—Թ. 6.
 ** ԳԼ. Ծ և ԺԶ. 4—ԹԾ 9:

թէ թղթի՝ այլ մարդկանց սրտերի մէջ պէտք է գրուէր, երբ բոլոր մարդիկ կարող էին Աստուած ճանաչել, առանց միջնորդի, առանց զօհի կենդանի Աստուծուն զիմել. և ամեն քրիստոնեայ, որ հաղորդակից է այդ երջանկութեան, չէ կարող երախտագիտութեամբ չյիշել այն մեծ մարգարէի անունը, որ անթիւ տառապանքներ է կրել այսպիսի կեանքի ճանապարհ հարթելու համար և որ այսօր էլ անլուելի բերանով խօսում է մեզ հետ, սուրբեցնում թէ ինչ ջերմեռանդութեամբ աղօթել պէտք է Աստուծուն, ինչ պիտի հաւատարմութիւն և տոկունութիւն ցոյց տալ ճշմարտութեան շաւղի վերայ:

Կ. Վ.

ՅԱՒԵԼՈՒԱԾ «ԱՐԱՐԱՏԻ»

Երեմիա մարգարէի մասին մի համառօտ ծանօթութիւն տալու առիթ եղաւ մեզ «Արարտի» ներկայ համարում տպուած Բարոսի գրքի հատուածը: Այս անունով մի գրութիւն ինչքան իմ ձեռքն եղած աղբիւրներից ստուգել կարողացայ, յիշուում է միայն Նիկիփորի և Աթանասի անուամբ մնացած ցուցակների մէջ և դեռ մինչև այժմ ոչ մի տեղ յայտնի և տպագրուած չէ եղել: Հին կտակարանի կանոնի մէջ մտել է միայն Բարուքի թուղթը, որի մեկնութիւնը գրելով գերմանացի աստուածաբան Ֆրիշէ* նկատում է, թէ լատիներէն և ասորերէն լեզուով մի թուղթ ևս կայ մնացած, որ կարող էր Բարուքի յիշեալ գրուածքը լինել, քայց խիստ կասկածելի է: Այդ թղթի նորա առաջ բերած բովանդակութիւնից երևում է, որ արդարև մեր հրատարակած Բարոսի բոլորովին տարբեր բան է: Մասնագէտներին կմնայ ի հարկէ այդ գրութեան ժամանակը և ունեցած արժէքը որոշել. ինչքան որ մենք դատել կարող ենք՝ անհավանական չէ, որ նա նոյն իսկ նախքրիստոսեան ժամանակում յառաջ եկած լինի հրեաների մէջ և յետոյ քրիստոնեաների ձեռքով փոփոխութեան ենթարկուած: Գործող անձինքն այստեղ՝ Բարուք, որ երեմիա մարգարէի գլխաւոր օգնականն էր և նորա մարգարէութիւնները գրի է առել (Երեմ. 1, 9) և նորա հետ մէկ տեղ կգիտաս գնացել (Երեմ. 10, 6): Աբրամելիք թիմոփայցին, որ նորան փոփ միջից հանել, մահից

աղաւել էր (Երեմ. 1, 9, 7 շ.), նոյն իսկ երկրորդական պարագաներ (օր. թուղթ՝ Երեմ. 10, 1 շ.)՝ երեմիայի մարգարէութիւնից են առնուած, իսկ նորա մասին պատմածը ոչինչ կապ չունի ի հարկէ իսկական պատմութեան հետ: Գրուածքի էական մասը և բուն նրա պատակը կազմում էին անշուշտ այն յայտնութիւնները, որ մահից առաջ երեմիան տուել է և որ զեղջուած են մեր ձեռք հասած բաժնի մէջ՝ գուցէ նոյն իսկ այն պատճառով, որ հրէական տիպ ունէին, վերջին ժամանակի հրէից Մեսիայի մասին ունեցած գաղափարներն էին արտայայտում: Այդպիսի յայտնութիւններ Քրիստոսից առաջ և Քրիստոսի ժամանակ շատ են գրուել հրէից մէջ և նոցանից մի քանիսը մեր ձեռքն են հասել, որոնք վերջերս մանաւանդ շատ են զբաղեցնում պատմագէտ աստուածաբաններին, ծառայելով իբրև թանգագին նիւթ՝ քրիստոնէութեան նախապատրաստական ժամանակը և առաջին գարի բազմաթիւ երևոյթները պարզելու համար:

Մեր հրատարակած Բարոսի առաջին օրինակը Մայր Աթոսի գրատան ձեռագիրների Մայր ցուցակի մէջ գտնելուց յետոյ (ձառքնաթիւ, Հ. 920) մեծազիր բոլորագիր Հարապաս ուսուանեալ, գրքեալ ի թուղթ բամբակի ի Մատթէոս քահանայէ ի Վերին Նորալանս, ի թուին Հայոց Ձե. 1856, եր. 119, թ. մ ձգ) ես հետաքրքրուեցայ իմանալու, թէ արդեօք նոյնը Միսիթար Այրիվանեցու նշանաւոր ձառքնաթիւ մէջ չէ՞ գործած* (Հ. 926 ըստ մայր ցուցակի) և տեսայ յիրաւի, որ վերջինիս իւր ժամանակագրութեան մէջ «Ողբ երեմիա ի Բաբելոն» վերնագրով յիշածը մի և նոյն Բարոսի է, ինչ ինչ փոփոխութիւններով և յաւելուածներով: Եւ որովհետև ոչ միայն այս փոփոխութիւնները կարևոր տեղ են բռնուած, այլ և ամբողջ հատուածը տարբեր թարգմանութիւն է երևում, տարբեր աղբիւրից յառաջ եկած՝ մենք հրատարակում ենք երկու օրինակները միասին, յուսալով որ նոցա բաղգատութիւնը աւելի կը-

* Տես Հայր Գալէմբարեանի յօդուածը՝ Հանդէս Ամսօրեայ, 1891, թիւ 6: Արարտի, ղեկտեմբեր ամսի համարում Երեմիայի տեալը շատ շտապով տպագրութեան յանձնելու ստիպուած՝ ուղարկութիւն չէի դարձրել, որ այդ գրուածքն էլ Այրիվանեցու ձառքնաթիւից է: Երևում եմ այս ձառքնաթիւից դեռ բաւական չիւթ կարող կլինինք մենք մատակարարել եւ մի ուրիշ առիթ տարականս գրուածքների այս թանգագին ժողովածուի մասին մանրամասն տեղեկութիւն կտանք:

* Kurzgefasstes Exegetisches handbuch zu den Apokryphen des A. T. 1851.